# Տ. ԱՐՇԱԿ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ ՔԱՐՈԶԸ՝ ԽՈՍՎԱԾ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՕՐՎԱ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ՄԱՏՈՒՑՎԱԾ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ

**(24 ապրիլի 2009 թ.)**

Մարդկանց՝ Աստծո մյուս արարչագործություններից զանազանող կարեւոր առանձնահատկություններից մեկը հիշողությունն է: Եւ վերստին մենք այդ հիշողությամբ վերապրում ենք ապրիլյան նախապապերի դառն ու դժվարին ճակատագիրը: Մենք պատմությանն այսօր նայում ենք խորը ցավով, բայց իբրեւ քրիստոնյաներ գիտենք տարանջատել մեղքը մեղավորից: Մեղավորի նկատմամբ մենք ատելություն չենք տածում, մենք դատապարտում ենք մե՛ղքը, մենք դատապարտում ենք ցեղասպանությո՛ւնը: Ցեղասպանություն կատարողների նկատմամբ մեր հոգիներն ատելություն չեն շնչում, պարզապես մեր մեջ հաղթանակում է լավատեսությունը, որ մի օր ցեղասպանության, ոճրագործության հեղինակները կիրածարվեն, կպարբերակեն, կառանձնացնեն իրենք իրենց մեղքից: Այդ լավատեսությունն է այսօր վերստին հավաքել մեր ողջ ժողովրդին:

Մեր ժողովուրդը, մեկ հոգի, մեկ սիրտ, մեկ բռունցք դարձած, որպես մշտամրմունջ աղոթք, հարահոս ընթանում է դեպի Ծիծեռնակաբերդի բարձունքը՝ իր հարգանքի տուրքը, իր խոնարհումը եւ իր աղոթքը մատուցելու Ցեղասպանության անմեղ զոհերի հիշատակին: Այսօր Ցեղասպանության զոհերի հիշատակին հարգանքի տուրք, խոնարհում եւ աղոթք մատուցելու համար ազգիս Վեհափառ Հայրապետ Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի նախագահությամբ եւ գլխավորությամբ, եւ հանրապետության բարձրաստիճան պաշտոնեությունը՝ Հայաստանի Հանրապետության Նախագահի գլխավորությամբ, այցելեցին Ծիծեռնակաբերդի բարձունք՝ առաջնորդելով հոտը բանավոր՝ վերստին իրենց խոնարհումը, իրենց հարգանքը մատուցելու Ցեղասպանության զոհերի հիշատակին:

Եւ այս պահին կրկին ցանկանում եմ հիշել երջանկահիշատակ Վազգեն Հայրապետի խոսքը. խոսք, որ որպես ժայռացած եւ արարատացած երդում պետք է դրոշմվի յուրաքանչյուրիս մտքի ու մտածողության մեջ: 1915թ. ապրիլ 24-ից՝ այդ եղեռնագործությունից եւ ցեղասպանությունից հետո, հայությունն այլեւս իրավունք չունի սխալվելու: Իրավունք չուներ սխալվելու ճակատագրական այնպիսի պահերի, ինչպիսին էր 1988 թ., իրավունք չունի սխալվելու նաեւ այսօր: Չափազանց դժվարին, չափազանց ճակատագրական, դրամատիզմով լեցուն մի ժամանակաշրջան ենք ապրում: Ապրում ենք մի երկրում, որտեղ խաչաձեւվում են տարբեր երկրների շահերը, տարբեր ներգործությունները: Ապրում ենք մի ժամանակաշրջանում, երբ տարբեր օտարամոտ հոսանքներ ներխուժում են հայկական օջախներ, հայրենական բնօրրան՝ պղտորելու մեր անդորրը, օտարացնելու, շփոթեցնելու մեր միտքերը, եւ այսօր ապրիլյան նախապապերի հիշատակի նկատմամբ մեր ակնածանքը, սերը եւ զգացումները պիտի օգնեն ու աջակցեն մեզ, որպեսզի հավատարիմ մնանք նրանց տեսիլքին, հավատարիմ մնանք նրանց իղձերին, հավատարիմ մնանք մանավանդ նրանց հավատքին եւ նրանց լեզվին:

Թող Տիրոջ օրհնությունը, թող Տիրոջ աջը մշտապես հովանի լինեն մեր ժողովրդին, թող Ս. Հոգու մխիթարությունները վերստին ու վերստին գան հայության հավաքական հոգին սփոփելու՝ կրած դառն կորուստներից: Եւ թող հանգստություն, խունկ եւ օրհնություն, մշտամրմունջ աղոթք լինի ապրիլյան զոհերի հիշատակին:

Շնորհք, սէր, խաղաղութիւն եղիցին ընդ ձեզ, ընդ մեզ եւ ընդ ամենեսեանս. Ամէն: